

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

Անդամները,

նկատի ունենալով միջազգային առևտրային համակարգը ՄԱԳ-Հ-1994-ի հիման վրա բարելավելու և ամրապնդելու՝ Անդամների ընդհանուր նպատակը,

ընդունելով ՄԱԳ-Հ-1994-ի, հատկապես, նրա XIX Հոդվածի (Արտակարգ գործողություններ առանձին արտադրանքների ներմուծման նկատմամբ) հիմնադրույթների հստակեցման և ամրապնդման անհրաժեշտությունը՝ պաշտպանական միջոցների նկատմամբ բազմակողմ վերահսկողություն վերահաստատելու և այդ վերահսկողությունից դուրս ընկնող միջոցները վերացնելու համար,

ընդունելով կառուցվածքային կարգավորումների կարևորությունն ու միջազգային շուկաներում մրցակցությունը խթանելու, այլ ոչ թե սահմանափակելու անհրաժեշտությունը,

ընդունելով այնուհետև, որ այդ նպատակների համար պահանջվում է բոլոր Անդամների նկատմամբ կիրառելի և ՄԱԳ-Հ-1994-ի հիմնական սկզբունքների վրա հիմնված համընդգրկուն համաձայնագիր, սույնով համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

Սույն Համաձայնագրով սահմանվում են պաշտպանական միջոցների կիրառման կանոններ, որոնք հասկացվում են որպես ՄԱԳ-Հ-1994-ի XIX Հոդվածով նախատեսվող միջոցները:

Հոդված 2. Պայմաններ

1. Անդամը¹ կարող է արտադրանքի նկատմամբ պաշտպանական միջոց կիրառել միայն այն դեպքում, երբ այդ Անդամը ներքոշարադրյալ դրույթների համաձայն որոշում է, որ այդ արտադրանքն իր տարածք է ներմուծվում այնպիսի աճող ծավալներով՝ բացարձակ կամ ներքին արտադրության նկատմամբ հարաբերական առումով, և այնպիսի պայմաններով, որ լուրջ վնաս է հասցնում ներքին արդյունաբերական ճյուղին, որն արտադրում է նման կամ ուղղակիորեն մրցակից արտադրանքներ, կամ ստեղծում է լուրջ վնասի վտանգ:

2. Պաշտպանական միջոցները կիրառվում են ներմուծվող արտադրանքի նկատմամբ՝ անկախ դրա աղբյուրից:

Հոդված 3. Ուսումնասիրություն

1. Անդամը կարող է պաշտպանական միջոց կիրառել միայն այդ Անդամի իրավասու մարմնի անցկացրած ուսումնասիրությունից հետո, որն անցկացվում է նախօրոք սահմանված և ՄԱԳ-Հ-1994-ի X Հոդվածի համաձայն հրապարակված ընթացակարգերի համաձայն: Այդ ուսումնասիրությունն իր մեջ ընդգրկում է բոլոր շահագրգիռ կողմերին արված հրապարակային պատշաճ ծանուցումը և հրապարակային քննարկումներ կամ այլ համապատասխան միջոցառումներ, որտեղ ներմուծողները, արտահանողները և այլ շահագրգիռ կողմերը կարող են իրենց տեսակետներն ու ապացույցներ ներկայացնել, ներառյալ՝ հնարավորություն՝ պատասխանելու այլ կողմերի ներկայացրած նյութերին և ներկայացնելու իրենց տեսակետները՝ մասնավորապես այն մասին, թե արդյոք պաշտպանական միջոցի կիրառումը հասարակական շահերից է բխում, թե ոչ: Իրավասու մարմինը զեկուցագիր է հրապարակում, որում նշվում են գործին առնչվող բոլոր փաստերի և իրավական հարցերի վերաբերյալ արված իր եզրահանգումներն ու հիմնավորված եզրակացությունները:

2. Իրավասու մարմինը պատճառաբանության ներկայացման դեպքում ցանկացած տեղեկության, որը գաղտնի է իր բնույթով կամ տրամադրվել է գաղտնիության հիմունքով, վերաբերվում է որպես այդպիսին: Այդ տեղեկությունը չի բացահայտվում առանց այն ներկայացնող կողմի թույլտվության: Գաղտնի տեղեկություն ներկայացնող շահագրգիռ կողմերից կարող է պահանջվել դրա համար ոչ գաղտնի ամփոփագրեր ներկայացնել, կամ եթե այդ կողմերը նշում են, որ այդ տեղեկությունը հնարավոր չէ ամփոփագրել, ապա ամփոփագիր տրամադրելու անհնարինության պատճառները: Այնուամենայնիվ, եթե իրավասու մարմինը համարում է, որ գաղտնիության պահանջը հիմնավորված չէ, և եթե տվյալ կողմը չի կամենում հրապարակայնացնել տեղեկությունը կամ թույլատրել դրա բացահայտումն ընդհանրացված կամ ամփոփագրված տեսքով, ապա

¹ Մաքսային միությունը կարող է պաշտպանական միջոց կիրառել որպես մեկ միավոր կամ անդամ Երկրի անունից: Եթե մաքսային միությունը պաշտպանական միջոց է կիրառում որպես մեկ միավոր, ապա սույն Համաձայնագրի համաձայն լուրջ վնասի կամ դրա վտանգի մասին եզրակացությունների համար բոլոր պահանջները հիմնվում են մաքսային միությունում՝ որպես ամբողջությունում, գոյություն ունեցող պայմանների վրա: Եթե պաշտպանական միջոցը կիրառվում է անդամ Երկրի անունից, ապա լուրջ վնասի կամ դրա վտանգի մասին եզրակացությունների համար բոլոր պահանջները հիմնվում են այդ անդամ Երկրում գոյություն ունեցող պայմանների վրա, և այդ միջոցը սահմանափակվում է այդ անդամ Երկրով: Սույն Համաձայնագիրը ոչնչով չի կանխորոշում ՄԱԳ-Հ-1994-ի XXIV Հոդվածի 8-րդ կետի և XIX Հոդվածի միջև հարաբերության մեկնաբանությունը:

իրավասու մարմինը կարող է անտեսել այդ տեղեկությունը, եթե համապատասխան աղբյուրներից իր համար համոզիչ ապացույցներ չկան, որ տեղեկությունը ճիշտ է:

Հոդված 4. Լուրջ վնասի կամ դրա վտանգի որոշում

1. Սույն Համաձայնագրի նպատակներով.

- ա) «լուրջ վնասը» հասկացվում է որպես ներքին արդյունաբերական ճյուղի դիրքերի համատարած նշանակալի խարխուլում.
- բ) «լուրջ վնասի վտանգը» հասկացվում է որպես ակնհայտորեն վերահաս լուրջ վնաս՝ համաձայն 2-րդ կետի դրույթների: Լուրջ վնասի վտանգի վերաբերյալ եզրակացությունը հիմնվում է փաստերի և ոչ գոյացված պնդումների, ենթադրությունների կամ հեռավոր հնարավորությունների վրա, և՛
- գ) վնասը կամ դրա վտանգը որոշելիս «ներքին արդյունաբերական ճյուղը» հասկացվում է որպես Անդամի տարածքում գործող, նման կամ ուղղակիորեն մրցակից արտադրանքներ արտադրողների ամբողջությունը, կամ այդ արտադրողներից նրանք, ովքեր համատեղ թողարկում են նման կամ ուղղակիորեն մրցակից արտադրանքների ամբողջ ներքին արտադրության հիմնական մասը:

2. ա) Ուսումնասիրության ընթացքում, որով որոշվում է, թե արդյոք աճող ներմուծումները սույն Համաձայնագրի դրույթների համաձայն լուրջ վնաս են հասցրել ներքին արդյունաբերական ճյուղին կամ ստեղծում են լուրջ վնասի վտանգ, իրավասու մարմինը քննության է առնում այդ արդյունաբերական ճյուղի վիճակին առնչվող բոլոր համապատասխան անաչառ ու քանակավորելի գործոնները, մասնավորապես՝ տվյալ արտադրանքի ներմուծումների աճի գործակիցն ու մեծությունը՝ բացարձակ ու հարաբերական առումով, ներքին շուկայի այն բաժինը, որը գրավվել է աճող ներմուծումներով, վաճառքի ծավալի, արտադրության, արտադրողականության, կարողությունների շահագործման, շահույթների ու կորուստների և զբաղվածության փոփոխությունները:

- բ) «ա» ենթակետում հիշատակված եզրակացությունը չի կայացվում, քանի դեռ այդ ուսումնասիրությամբ անաչառ ապացույցների հիման վրա ցույց չի տրվել տվյալ արտադրանքի աճող ներմուծումների և լուրջ վնասի կամ դրա վտանգի միջև պատճառահետևանքային կապի գոյությունը: Եթե աճող ներմուծումից տարբեր այլ գործոններ վնաս են հասցնում ներքին արդյունաբերական ճյուղին, ապա այդ վնասը չի վերագրվում աճող ներմուծումներին:

- գ) Իրավասու մարմինը, 3-րդ Հոդվածի դրույթներին համապատասխան, շտապ կարգով հրապարակում է ուսումնասիրության ենթակա գործի մանրամասն վերլուծությունը, ինչպես նաև քննության առնված գործոնների՝ գործի հետ առնչվելու ապացույցները:

Հոդված 5. Պաշտպանական միջոցների կիրառում

1. Անդամը պաշտպանական միջոցները կիրառում է միայն այն չափով, որքանով անհրաժեշտ է լուրջ վնասը կանխելու կամ հատուցելու և կարգավորմանը նպաստելու համար: Եթե քանակական սահմանափակում է օգտագործվում, ապա այդ միջոցով ներմուծումների քանակը չի իջեցվում վերջին ժամանակահատվածի մակարդակից, ինչը ներմուծումների միջինն է վերջին երեք հատկանշական տարիների ընթացքում, որոնց համար առկա են վիճակագրական տվյալներ, քանի դեռ հստակ հիմնավորում չի տրվել, որ լուրջ վնասի կանխման կամ հատուցման համար մեկ այլ մակարդակ է անհրաժեշտ: Անդամները պետք է ընտրեն միջոցներ, որոնք ամենից հարմար են այս նպատակներին հասնելու համար:

2. ա) Այն դեպքերում, երբ քվոտան բաշխվում է մատակարարող երկրների միջև, սահմանափակումներ կիրառող Անդամը կարող է քվոտայի չափաբաժինների բաշխման համար ձեռք բերել բոլոր այլ Անդամների համաձայնությունը, որոնք էական շահագրգռություն ունեն տվյալ արտադրանքի մատակարարման մեջ: Այն դեպքերում, երբ այդ եղանակն իսկապես հնարավոր չէ, տվյալ Անդամը արտադրանքի մատակարարման մեջ էական շահագրգռություն ունեցող Անդամների միջև չափաբաժինների բաշխումը կատարում է՝ հիմնվելով նախորդ հատկանշական ժամանակահատվածի ընթացքում արտադրանքի ներմուծման ամբողջ քանակի կամ արժեքի մեջ այդ Անդամների կատարած մատակարարումների մասնաբաժինների վրա՝ պատշաճորեն հաշվի առնելով այն հատուկ գործոնները, որոնք կարող են ազդած լինել կամ ազդելիս լինեն արտադրանքի առևտրի վրա:

- բ) Անդամը կարող է հրաժարվել «ա» ենթակետի դրույթներից, եթե 12-րդ Հոդվածի 3-րդ կետի համաձայն խորհրդակցություններ են անցկացվել 13-րդ Հոդվածի 1-ին կետով նախատեսված Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբի հովանավորության ներքո, և եթե Հանձնախմբին հստակորեն ցույց է տրվում, որ.) որոշ Անդամներից եկող ներմուծումները անհամամասն տոկոսաչափով են աճել՝ համեմատած հատկանշական ժամանակահատվածի ընթացքում տվյալ արտադրանքի

ներմուծումների ամբողջ աճի հետ,) «ա» ենթակետի դրույթներից հրաժարվելու պատճառները արդարացված են, և՛) այդ հրաժարման պայմանները հավասար են տվյալ արտադրանքի բոլոր մատակարարների համար: Որևէ այդպիսի միջոցի տևողությունը չի երկարացվում 7-րդ Հոդվածի 1-ին կետով սահմանված սկզբնական ժամկետից: Վերը հիշատակված հրաժարումը չի թույլատրվում լուրջ վնասի վտանգի դեպքում:

Հոդված 6. Ժամանակավոր պաշտպանական միջոցներ

Ծայրահեղ դեպքերում, երբ հապաղումը վնաս կհասցնի, որը դժվար կլինի վերականգնել, Անդամը կարող է ժամանակավոր միջոց ձեռնարկել նախնական եզրակացության համաձայն, ըստ որի՝ առկա են հստակ ապացույցներ, որ աճող ներմուծումները լուրջ վնաս են հասցրել կամ ստեղծում են լուրջ վնասի վտանգ: Ժամանակավոր միջոցի տևողությունը չի գերազանցում 200 օրը, որի ընթացքում պահպանվում են 2-7-րդ Հոդվածների և 12-րդ Հոդվածի համապատասխան դրույթները: Այդպիսի միջոցները պետք է կիրառվեն մաքսադրույթների բարձրացման ձևով, որոնք շտապ կարգով հետ են վճարվում, եթե 4-րդ Հոդվածի 2-րդ կետում հիշատակված հետագա ուսումնասիրությամբ չի պարզվում, որ աճող ներմուծումները լուրջ վնաս են հասցրել ներքին արդյունաբերական ճյուղին կամ ստեղծել են լուրջ վնասի վտանգ: Ցանկացած այդպիսի ժամանակավոր միջոցի տևողությունը հաշվվում է որպես 7-րդ Հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում հիշատակված սկզբնական ժամկետի և ցանկացած երկարացման մաս:

Հոդված 7. Պաշտպանական միջոցի տևողությունն ու վերաքննությունը

1. Անդամը ժամանակավոր միջոցներ է կիրառում միայն այնքան ժամանակ, որքան կարող է անհրաժեշտ լինել լուրջ վնասի կանխման կամ հատուցման և կարգավորմանը նպաստելու համար: Այդ ժամանակահատվածը չի գերազանցում չորս տարին, եթե այն չի երկարացվել 2-րդ կետի համաձայն:

2. 1-ին կետում նշված ժամկետը կարող է երկարացվել, եթե ներմուծող Անդամի իրավասու մարմինը 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ Հոդվածներով սահմանված ընթացակարգերի համաձայն եզրակացնում է, որ լուրջ վնասի կանխման կամ հատուցման համար պաշտպանական միջոցը շարունակում է անհրաժեշտ լինել, և որ կան ապացույցներ, որ արդյունաբերական ճյուղը կարգավորվում է, և եթե պահպանվում են 8-րդ և 12-րդ Հոդվածների համապատասխան դրույթները:

3. Պաշտպանական միջոցի կիրառման ընդհանուր ժամանակահատվածը, ներառյալ՝ ցանկացած ժամանակավոր միջոցի կիրառման ժամանակահատվածը, սկզբնական կիրառման ու դրա ցանկացած երկարացման ժամանակահատվածը, չի գերազանցում ութ տարին:

4. Այն դեպքերում, երբ 12-րդ Հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն ծանուցված պաշտպանական միջոցի ակնկալվող տևողությունը մեկ տարվանից ավելի է, միջոցը կիրառող Անդամը՝ կարգավորմանը նպաստելու համար, կիրառման ժամանակահատվածի ընթացքում կանոնավոր պարբերությամբ աստիճանաբար ազատականացնում է այն: Եթե միջոցի տևողությունը գերազանցում է երեք տարին, ապա այդ միջոցը կիրառող Անդամը իրավիճակը վերաքննում է ոչ ուշ, քան միջոցի տևողության կեսը լրանալը և անհրաժեշտության դեպքում վերացնում է այն կամ մեծացնում է ազատականացման թափը: 2-րդ կետի համաձայն երկարացված միջոցն ավելի խիստ չէ, քան էր սկզբնական ժամանակահատվածի վերջում և շարունակում է ազատականացվել:

5. Այն արտադրանքի ներմուծման նկատմամբ, որը ենթակա է եղել ԱՀԿ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ձեռնարկված պաշտպանական միջոցի, կրկին անգամ այդպիսի միջոց չի կարող կիրառվել այնքան ժամանակ, որը հավասար է այն ժամանակահատվածին, որի ընթացքում նախկինում այդպիսի միջոց է կիրառվել, եթե չկիրառման ժամանակահատվածը առնվազն երկու տարի է:

6. Անկախ 5-րդ կետի դրույթներից, արտադրանքի ներմուծման նկատմամբ կրկին կարող է կիրառվել 180 օր կամ դրանից պակաս տևողությամբ պաշտպանական միջոց, եթե՝

ա) այդ արտադրանքի ներմուծման նկատմամբ պաշտպանական միջոց մտցնելու օրվանից անցել է առնվազն մեկ տարի, և՛

բ) այդ նույն արտադրանքի նկատմամբ երկուսից ավելի անգամ այդպիսի միջոց չի կիրառվել՝ միջոցը մտցնելու օրվան անմիջապես նախորդող հնգամյա ժամանակահատվածում:

Հոդված 8. Զիջումների մակարդակը և այլ պարտավորություններ

1. Այն անդամը, որն առաջարկում է պաշտպանական միջոց կիրառել կամ ցանկանում է երկարացնել պաշտպանական միջոցը, ձգտում է 12-րդ Հոդվածի 3-րդ կետի դրույթների համաձայն պահպանել զիջումների և այլ պարտավորությունների մի մակարդակ, որն էականորեն հավասարաբեռ է իր և այն արտահանող Անդամների միջև ՄԱԳ-Հ-1994-ի շրջանակներում գոյություն ունեցող մակարդակին, որոնց վրա այդ միջոցն

ազդեցություն կունենա: Այդ նպատակին հասնելու համար, խնդրո առարկա Անդամները կարող են համաձայնության գալ իրենց առևտրի վրա միջոցի ունեցած վնասակար ազդեցությունների դիմաց ցանկացած համարժեք առևտրային փոխհատուցման միջոցառման շուրջ:

2. Եթե 12-րդ Հոդվածի 3-րդ կետի համաձայն վարվող խորհրդակցություններում 30 օրվա ընթացքում համաձայնություն ձեռք չի բերվում, ապա տուժող արտահանող Անդամներն ազատ են, միջոցի կիրառումից հետո 90 օրվա ընթացքում, Ապրանքների առևտրի խորհրդի կողմից այդ դադարեցման մասին գրավոր ծանուցում ստանալու օրվանից 30 օր անցնելուց հետո պաշտպանական միջոցը կիրառող Անդամի առևտրի մասով ժամանակավորապես դադարեցնել ՄԱԳ-Հ-1994-ով սահմանված էականորեն հավասարաթեք զիջումների կամ այլ պարտավորությունների կիրառումը, որոնց ժամանակավոր դադարեցումը Ապրանքների առևտրի խորհուրդը չի մերժում:

3. 2-րդ կետում հիշատակված ժամանակավոր դադարեցման իրավունքը չի կիրարկվում պաշտպանական միջոցի՝ ուժի մեջ գտնվելու առաջին երեք տարիների ընթացքում, եթե պաշտպանական միջոցը ձեռնարկվել է ներմուծումների բացարձակ աճի հետևանքով. և եթե այդ միջոցը համապատասխանում է սույն Համաձայնագրի դրույթներին:

Հոդված 9. Չարգացող Անդամ երկրներ

1. Չարգացող Անդամ երկրում ծագած արտադրանքի նկատմամբ պաշտպանական միջոցներ չեն կիրառվում այնքան ժամանակ, քանի դեռ ներմուծող Անդամի տարածք տվյալ արտադրանքի ներմուծման մեջ նրա բաժինը չի գերազանցում 3 տոկոսը, եթե 3 տոկոսը չգերազանցող ներմուծման բաժին ունեցող զարգացող Անդամ երկրներին համատեղ բաժին է ընկնում ոչ ավելի, քան տվյալ արտադրանքի ընդհանուր ներմուծման 9 տոկոսը²:

2. Չարգացող Անդամ երկիրն իրավունք ունի պաշտպանական միջոցի կիրառման ժամանակահատվածը 7-րդ Հոդվածի 3-րդ կետով սահմանված առավելագույն ժամանակահատվածից ավելի երկարացնել մինչև երկու տարով: Անկախ 7-րդ Հոդվածի 5-րդ կետի դրույթներից, այն արտադրանքի ներմուծման նկատմամբ, որը ենթակա է եղել ԱՀԿ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ձեռնարկված պաշտպանական միջոցի, զարգացող Անդամ երկիրն իրավունք ունի կրկին անգամ պաշտպանական միջոց կիրառել այնքան ժամանակ հետո, որը հավասար է այն ժամանակահատվածի կեսին, որի ընթացքում այդպիսի միջոցը կիրառվել է նախկինում, եթե չկիրառման ժամանակահատվածն առնվազն երկու տարի է:

Հոդված 10. Նախկինում գոյություն ունեցող՝ Հոդված XIX-ի միջոցները

Անդամները ՄԱԳ-Հ-1947-ի XIX Հոդվածի համաձայն ձեռնարկված բոլոր պաշտպանական միջոցները, որոնք գոյություն ունեին ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը, դադարեցնում են ոչ ուշ, քան դրանց առաջին կիրառման օրվանից ութ տարի հետո, կամ՝ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարի հետո՝ նայած թե որն ավելի ուշ կլինի:

Հոդված 11. Որոշ միջոցների արգելում ու վերացում

1. ա) Անդամն առանձին արտադրանքների ներմուծման նկատմամբ ՄԱԳ-Հ-1994-ի XIX Հոդվածով սահմանված որևէ արտակարգ գործողություն չի ձեռնարկում կամ դրան չի ձգտում, եթե այդ գործողությունը չի համապատասխանում այդ Հոդվածի՝ սույն Համաձայնագրի համաձայն կիրառվող դրույթներին:

բ) Այնուհետև, Անդամը չի ձգտում, չի ձեռնարկում կամ չի պահպանում արտահանման որևէ կամավոր սահմանափակում, շուկայահանումը կանոնավորող որևէ համաձայնություն կամ համանման որևէ այլ միջոց՝ արտահանման կամ ներմուծման մասով^{3,4}: Դրանք ներառում են մեկ Անդամի ձեռնարկած գործողություններ, ինչպես նաև ըստ երկու կամ ավելի Անդամների միջև կնքված համաձայնագրերի, համաձայնությունների կամ փոխհամաձայնությունների ձեռնարկված գործողությունները: ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը գործող ցանկացած այդպիսի միջոց համապատասխանեցվում է սույն Համաձայնագրին կամ աստիճանաբար վերացվում է 2-րդ կետի համաձայն:

² Անդամը Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբին անմիջապես ծանուցում է 9-րդ Հոդվածի 1-ին կետի համաձայն ձեռնարկված գործողության մասին:

³ ՄԱԳ-Հ-1994-ի համապատասխան դրույթների համաձայն որպես պաշտպանական միջոց կիրառվող ներմուծման քվոտան՝ փոխադարձ համաձայնությամբ կարող է իրականացնել արտահանող Անդամը:

⁴ Համանման միջոցների օրինակները ներառում են արտահանման չափավորումը, արտահանման կամ ներմուծման գների դիտանցման համակարգերը, արտահանման կամ ներմուծման հսկողությունը, ներմուծման պարտադիր միավորումները (կարտելները) և արտահանման կամ ներմուծման հայեցողական լիցենզավորումը, որոնք որ պաշտպանություն են ապահովում:

գ) Սույն Համաձայնագիրը չի կիրառվում այն միջոցների նկատմամբ, որոնց Անդամը ձգտում է, ձեռնարկում կամ պահպանում է ըստ ՄԱԳ-Հ-1994-ի XIX Հոդվածից տարբեր դրույթների և ըստ 1Ա Հավելվածի՝ սույն Համաձայնագրից տարբեր Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերի, կամ ըստ ՄԱԳ-Հ-1994-ի շրջանակներում կնքված արձանագրությունների և համաձայնագրերի կամ համաձայնությունների:

2. 1«բ» կետում նշված միջոցների աստիճանաբար վերացումը կատարվում է համաձայն այն ժամկետացանկերի, որոնք խնդրո առարկա Անդամները պետք է Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբին ներկայացնեն ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ ոչ ուշ, քան 180 օր հետո: Այդ Ժամկետացանկերով նախատեսվում է աստիճանաբար վերացնել 1-ին կետում հիշատակված բոլոր միջոցները կամ դրանք համապատասխանեցնել սույն Համաձայնագրի դրույթներին՝ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո չորս տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր ներմուծող Անդամի համար կատարելով ոչ ավելի, քան մեկ հատուկ միջոցի մասով բացառություն⁵, որի տևողությունը չի կարող անցնել 1999թ. դեկտեմբերի 31-ից: Ցանկացած այդպիսի բացառություն պետք է փոխադարձաբար համաձայնեցվի գործին ուղղակիորեն առնչվող Անդամների միջև, և վերաքննման և ընդունման համար այն պետք է Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբին ծանուցվի ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրվա ընթացքում: Սույն Համաձայնագրի Հավելվածում հասկանալիվում է այն միջոցը, որը համաձայնեցվել է որպես այս բացառությանը համապատասխանող միջոց:

3. Անդամները չեն խրախուսում կամ օժանդակում, որ պետական ու մասնավոր կազմակերպություններն ընդունեն կամ պահպանեն 1-ին կետում հիշատակված միջոցներին հավասար ոչ կառավարական միջոցներ:

Հոդված 12. Ծանուցում և խորհրդակցություն

1. Անդամը Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբին անմիջապես ծանուցում է՝

- ա) լուրջ վնասի կամ դրա վտանգի և դրա պատճառների հետ կապված ուսումնասիրման գործընթացի նախաձեռնման մասին.
- բ) աճող ներմուծումներով պատճառված լուրջ վնասի կամ դրա վտանգի վերաբերյալ կատարված հայտնաբերումների մասին.
- գ) պաշտպանական միջոցի կիրառման կամ երկարաձգման վերաբերյալ կայացված որոշումների մասին:

2. 1«բ» և 1«գ» կետերում նշված ծանուցումները կատարելիս պաշտպանական միջոցի կիրառում կամ երկարաձգում առաջարկող Անդամը Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբին տրամադրում է գործին առնչվող բոլոր տեղեկությունները, որոնք ներառում են աճող ներմուծումներով պատճառված վնասի կամ դրա վտանգի վերաբերյալ ապացույցները, խնդրո առարկա արտադրանքի ճշգրիտ նկարագրությունը և նախատեսվող միջոցը, միջոցը մտցնելու նախատեսվող ժամկետը, սպասվելիք տևողությունը և աստիճանական ազատականացման ժամկետացանկը: Միջոցի երկարաձգման դեպքում ապացույցներ են տրամադրվում նաև առ այն, որ խնդրո առարկա արդյունաբերական ճյուղը կարգավորվում է: Ապրանքների առևտրի խորհուրդը կամ Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբին կարող են միջոցի կիրառում կամ երկարաձգում առաջարկող Անդամից լրացուցիչ այնպիսի տեղեկություններ պահանջել, ինչպիսիք անհրաժեշտ կհամարեն:

3. Պաշտպանական միջոցի կիրառում կամ երկարաձգում առաջարկող Անդամը համապատասխան հնարավորություն է ընձեռում նախնական խորհրդակցություններ անցկացնել այն Անդամների հետ, որոնք էական շահագրգռություն ունեն որպես խնդրո առարկա արտադրանքի արտահանողներ՝ նպատակ ունենալով, այլոց թվում, վերաքննել 2-րդ կետի համաձայն տրամադրված տեղեկությունները, տեսակետներ փոխանակել միջոցի վերաբերյալ և փոխհամաձայնություն ձեռք բերել 8-րդ Հոդվածի 1-ին կետում նշված նպատակին հասնելու ճանապարհների շուրջ:

4. Նախքան 6-րդ Հոդվածում նշված ժամանակավոր պաշտպանական միջոց ձեռնարկելը Անդամն այդ մասին ծանուցում է Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբին: Խորհրդակցությունները նախաձեռնվում են միջոցը ձեռնարկելուց անմիջապես հետո:

5. Խնդրո առարկա Անդամներն Ապրանքների առևտրի խորհրդին անմիջապես ծանուցում են սույն Հոդվածում նշված խորհրդակցությունների արդյունքների, ինչպես նաև 7-րդ Հոդվածի 4-րդ կետում նշված միջանկյալ վերաքննությունների արդյունքների, 8-րդ Հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած ձևի փոխհատուցումների, և 8-րդ Հոդվածի 2-րդ կետում նշված զիջումների և այլ պարտավորությունների համար առաջարկված ժամանակավոր դադարեցումների մասին:

6. Անդամները Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբին շտապ կարգով ծանուցում են պաշտպանական միջոցների հետ կապված իրենց օրենքների, կանոնակարգերի և վարչական ընթացակարգերի,

⁵ Միակ այդպիսի բացառությունը, որի իրավունքը տրված է Եվրոպական Համայնքներին, հատկանշված է սույն Համաձայնագրի

ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների մասին:

7. Այն Անդամները, որոնք 10-րդ Հոդվածում և 11-րդ Հոդվածի 1-ին կետում նկարագրված՝ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը գոյություն ունեցող միջոցներ են պահպանում, Պաշտպանական միջոցների հանձնախմբին այդ միջոցների մասին ծանուցում են ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ ոչ ուշ, քան 60 օր հետո:

8. Ցանկացած Անդամ կարող է Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբին ծանուցել սույն Համաձայնագրով կարգավորվող օրենքների, կանոնակարգերի, վարչական ընթացակարգերի և ցանկացած միջոցների կամ գործողությունների մասին, որոնք չեն ծանուցվել այլ Անդամների կողմից, որոնցից սույն Համաձայնագրով պահանջվում է կատարել այդ ծանուցումները:

9. Ցանկացած Անդամ կարող է Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբին ծանուցել 11-րդ Հոդվածի 3-րդ կետում նշված ոչ կառավարական միջոցների մասին:

10. Ապրանքների առևտրի խորհրդին ուղղված՝ սույն Համաձայնագրում հիշատակված ծանուցումները սովորաբար կատարվում են Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախմբի միջոցով:

11. Սույն Հոդվածի ծանուցման վերաբերյալ դրույթներով որևէ Անդամից չի պահանջվում բացահայտել գաղտնի տեղեկություններ, որոնց բացահայտումը կխոչընդոտի օրենքի կիրարկումը կամ այլ կերպ կհակասի հասարակական շահերին կամ կվնասի պետական կամ մասնավոր առանձին ընկերությունների առևտրային օրինական շահերին:

Հոդված 13. Հսկողություն

1. Սույնով ստեղծվում է Պաշտպանական միջոցների հարցերով հանձնախումբ՝ Ապրանքների առևտրի խորհրդի իրավասության ներքո, որը բաց է բոլոր Անդամների մասնակցության համար, որոնք հայտնում են դրանում ծառայելու իրենց ցանկության մասին: Հանձնախումբը կունենա հետևյալ գործառույթները.

- ա) դիտանցել սույն Համաձայնագրի ընդհանուր իրականացումն ու այդ մասին տարին մեկ զեկուցել Ապրանքների առևտրի խորհրդին, և առաջարկություններ կատարել դրա բարելավման վերաբերյալ.
- բ) տուժող Անդամի պահանջով պարզել՝ արդյոք պաշտպանական միջոցի առնչությամբ պահպանվել են սույն Համաձայնագրի ընթացակարգային պահանջները, և իր հայտնաբերումների վերաբերյալ զեկուցել Ապրանքների առևտրի խորհրդին.
- գ) եթե Անդամները պահանջում են, ապա նրանց աջակցել սույն Համաձայնագրով անցկացվող իրենց խորհրդակցությունների հարցում.
- դ) քննության առնել 10-րդ Հոդվածով և 11-րդ Հոդվածի 1-ին կետով կարգավորվող միջոցները, դիտանցել այդ միջոցների աստիճանական վերացումը և համապատասխանաբար զեկուցել Ապրանքների առևտրի խորհրդին.
- ե) պաշտպանական միջոց ձեռնարկող Անդամի պահանջով վերաքննել, թե արդյոք զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցման առաջարկություններն «էականորեն հավասարաբեռ են», և համապատասխանաբար զեկուցել Ապրանքների առևտրի խորհրդին.
- զ) ստանալ և վերաքննել սույն Համաձայնագրով նախատեսված բոլոր ծանուցումներն ու համապատասխանաբար զեկուցել Ապրանքների առևտրի խորհրդին.
- է) իրականացնել սույն Համաձայնագրի հետ կապված ցանկացած այլ գործառույթ, որը կարող է նախատեսել Ապրանքների առևտրի խորհուրդը:

2. Քարտուղարությունը՝ Հանձնախմբին հսկողության իր գործառույթն իրականացնելիս աջակցելու համար տարին մեկ փաստական զեկուցագիր է պատրաստում սույն Համաձայնագրի գործողության վերաբերյալ՝ հիմնվելով ծանուցագրերի և իր մոտ առկա այլ հավաստի տեղեկությունների վրա:

Հոդված 14. Վեճերի կարգավորում

Սույն Համաձայնագրի շրջանակներում ծագող վեճերի կարգավորման և խորհրդակցությունների նկատմամբ կիրառվում են Վեճերի կարգավորման փոխհամաձայնությամբ մշակված ու ըստ դրա կիրառվող՝ ՄԱԳ-Հ-1994-ի XXII և XXIII Հոդվածների դրույթները:

ՀԱՎԵԼՎԱԾ

11-ԲԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ԲԴ ԿԵՏՈՒՄՆԸՎԱԾ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Խնդրո առարկա Անդամները	Արտադրանքը	Վերացումը
ԵՀ/Ճապոնիա	Ուղևորատար ավտոմեքենաներ, ոչ ճանապարհային փոխադրամիջոցներ, ոչ անձնական օգտագործման փոխադրամիջոցներ, թեթև բեռնատարներ (մինչև 5 տոննա), և նույն փոխադրամիջոցները ամբողջությամբ մասնատված ձևով («CKD» փաթեթներ):	1999 թ. դեկտեմբերի 31